Արևելագիտության
ինստիտուտ պետական ոչ
առևտրային կազմակերպություն

Ֆրիդրիխ-Էբերտ-Հիմնադրամի
Հայաստանյան Մասնաճյուղ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Արևելագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ **Ինստիտուտ**), ի դեմս տնօրեն Գոհար Իսկանդարյանի, ով գործում է Ինստիտուտի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Ֆրիդրիխ-Էբերտ-Հիմնադրամի ՀՄ-ը (այսուհետ՝ **Հիմնադրամ**), ի դեմս գրասենյակի տնօրեն,Նաիրա Գևորգյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ **Կողմեր**), կարևորելով ժողովրդավարության, սոցիալական արդարության, խաղաղության, մարդու իրավունքների պաշտպանության և ակադեմիական ազատության սկզբունքների վրա հիմնված գիտական ու հանրային երկխոսության զարգացումը, հաշվի առնելով Հիմնադրամի գործունեության առաջնահերթությունները՝ քաղաքական կրթության, սոցիալական արդարության, տարածաշրջանային անվտանգության և քաղաքացիական հասարակության զարգացման ոլորտներում, ինչպես նաև Ինստիտուտի գիտահետազոտական ներուժը՝ Հարավային Կովկասի, Մերձավոր, Միջին և Հեռավոր Արևելքի, Եվրասիայի տարածաշրջանային քաղաքական և անվտանգային գործընթացների ուսումնասիրման, ինչպես նաև գիտություն-կրթություն կապը զարգացնելու ուղղությամբ, կնքում են սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ **Հուշագիր**) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Հուշագրի առարկան Կողմերի միջև համագործակցության շրջանակի սահմանումն է՝ կրթական, գիտահետազոտական, փորձագիտական և հանրային քաղաքականության ոլորտներում:

1.2. Հուշագիրը սահմանում է Կողմերի համագործակցության նպատակները, հիմնական ուղղությունները, ինչպես նաև փոխգործակցության սկզբունքները:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հուշագրի նպատակն է՝

- խթանել գիտական և փորձագիտական երկխոսությունը ժողովրդավարության, սոցիալական արդարության և խաղաղության հիմնախնդիրների շուրջ,
- նպաստել քաղաքացիական հասարակության, քաղաքական կրթության և հանրային դիվանագիտության զարգացմանը,
- աջակցել տարածաշրջանային անվտանգության, համագործակցության և կայուն զարգացման հարցերի բազմակողմ ուսումնասիրությանը:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա) փորձագիտական ծրագրերի իրականացում՝ հանրային իրազեկվածության և գրագիտության մակարդակի բարձրացմանը, տարածաշրջանային անվտանգության և միջազգային հարաբերությունների ոլորտներում,

բ) գիտաժողովների, կլոր սեղանների, աշխատաժողովներ, հանրային քննարկումների և քաղաքական կրթական ծրագրերի կազմակերպում,

գ) փորձագիտական զեկույցների, վերլուծությունների, քաղաքական առաջարկությունների (policy papers) մշակում և հրապարակում,

դ) երիտասարդ հետազոտողների մասնագիտական կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում,

ե) միջազգային փորձի ուսումնասիրություն և տարածում,

է) տարածաշրջանային և միջազգային համագործակցության հարթակներում համատեղ նախաձեռնությունների իրականացում,

ը) քաղաքացիական հասարակության, սոցիալական գործընկերության և հանրային երկխոսության խթանմանը միտված ծրագրերի մշակում,

2.3. Կողմերը կարող են համագործակցել նաև այլ ուղղություններով, որոնք կհամապատասխանեն նրանց ռազմավարական նպատակներին և չեն հակասի գործող օրենսդրությանը:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

3.1. Կողմերը համագործակցությունն իրականացնում են հետևյալ ձևերով.

ա) համատեղ ծրագրերի և նախագծերի մշակում և իրականացում,

բ) փորձագետների փոխադարձ ներգրավում գիտական և կրթական միջոցառումներում,

գ) թեմատիկ աշխատաժողովների կազմակերպում,

դ) համատեղ հետազոտությունների արդյունքների հրապարակում վերլուծական և մեդիա հարթակներում,

ե) տեղեկատվության և մասնագիտական նյութերի փոխանակում,

զ) դրամաշնորհային և արտաքին ֆինանսավորմամբ ծրագրերում փոխադարձ ներգրավում:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերը պարտավորվում են համագործակցությունը իրականացնել փոխադարձ հարգանքի, հավասարության և թափանցիկության սկզբունքներով:

4.2. Յուրաքանչյուր կոնկրետ ծրագրի իրականացումը կարող է ձևակերպվել առանձին համաձայնագրով կամ հավելվածով, որտեղ կհստակեցվեն ֆինանսական և կազմակերպչական պայմանները:

4.3. Սույն Հուշագիրը ինքնին չի ստեղծում ֆինանսական պարտավորություններ, եթե դրանք հատուկ ամրագրված չեն լրացուցիչ համաձայնագրերով:

4.4. Կողմերը կարող են համատեղ ներգրավել արտաքին ֆինանսական գործընկերներ և դոնոր կազմակերպություններ:

5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

5.1. Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

5.2. Փոփոխությունները և լրացումները
Հուշագրի անբաժանելի մասը:

6. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

6.2. Հուշագիրը կնքվում է անժամկետ:

6.3. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել Հուշագրի գործողությունը՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն Հուշագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով՝ երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակով:

7.2. Յուրաքանչյուր Կողմ ստանում է մեկական օրինակ:

Սույն Հուշագիրը ստորագրվել է «___» _____ 2026 թ., ք. Երևան:

«ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ	ՖՐԻԴՐԻԽ-ԷԲԵՐՏ-ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4	Հասցե՝ ՀՀ, Երևան, Մոսկովյան փող. 31, 76/1
Տնօրեն՝ _____	Գրասենյակի տնօրեն՝ _____
Գոհար Իսկանդարյան	Նաիրա Գևորգյան
Կ.Տ.	Կ.Տ.